վարձ 'ի վերայ դրամոց գտացողն երկու պատկեայ շահ յետս դարձուսցէ 'ի նմայ յորմէ ստացաւ։

ԳԼՈՒԽ ՃԻԶ.

Դրամն միայն քսան և չորս ղրէթ ծանդրութեամբ կարէ ոսկէ և արծաթէ և'ի պղնձէ, կամ 'ի կապարէ լինիլ այլ դահեկան, և տէրունին պիտոյ է երծաթէ և ոսկոյ միայն լինիլ, և տիպ 'ի վերայ նոցայ նշան տէրունական սուրբ խաչի թուաւ ժամանակի տպման, և միւս յերեսն գրեցեալ բարի կացութիւն հայոց և անուն նոյն տեղի որում տպեսցի։

ԳԼՈՒԽ ՃԻԷ.

Օգնութիւն 'ի տանէն հայոց լիցի 'ի վերայ ամենայն արհեստաւորի յատկապէս փիլիսոփայութեան, աստղաբաշխութեան, բժշկութեան, երաժշտութեան, ճարտասանութեան և այլն։

ԳԼՈՒԽ ՃԻԸ.

Ամենայն Օտարական եթէ հաւատացեալ 'ի Քրիստոս եթէ անօրէն ազատապէս կարէ մտանել աշխարհս հայոց կալ և բնակիլ ընդ հովանաւորութեան տանն հայոց ազատապէս պաշտել զԱստուածս իւր, ըստ սովորութեան իւրոյ հատուցանելով հարկ և մաքս և պատիւս, և ընդու-